

Այգիներու որթատունկերը ընդհանրապէս կ'ըլլային ցած ու ամփոփ, բայց տուններու բակը տնկուած սարբինա (Ամալըզ)ներու վերայ բարձրացած որթատունկերու ողկոյղները կ'առնուէին պարկերու մէջ ցուրտէն պատսպարելու ու թարմ պահելու նպատակով:

Տեղական բարբառով խաղողը կը հնչուէր՝ հաղոդ, ողկոյղ՝ կիւզ՝ իսկ խաղողի հատիկները բոնոզ կապը՝ կիւզկապ:

Ո Ր Թ Ա Տ Ո Ւ Ն Կ Ը Ե Ի Ի Ր Պ Տ Ո Ւ Ղ Ը

Տունկն ու իր պտուղը լիովին կ'օգտագործուէր տեղացիներու կողմէ:

Յօտուած ձիւղերը տուն կը բերուէին վառելու համար: Ինչպէս ուրիշ առթիւ ալ արտայայտուած ենք, կըլմատայի ածուխը կը գործածուէր եկեղեցւոյ բուրվառներուն մէջ:

Կ'ըսուէր թէ այդ դիմացկուն ածուխի փոշիէն կը շինէին մաքր-կիւէյի ածուխը (Մանդրը):

Խաղողի տերեւը սովորական ձեւով փաթթելու համար կ'ընտրուէր, բայց նոյնքան կարեւոր ու նշանաւոր էր տեղացիներու ջարդուած տերեւով եփուած քրտըմբուրդը:

Ապուխտի իւղոտ կտորներով, սոխով ու ձաւարով կ'եփուէր այս համեղ կերակուրը:

Խիտ ու խոշոր ագոխները կը փրցուէին ու կ'եփուէին: Հիւթը թանձրանալով կ'ըլլար Ազոխի թթու (գօրուզ էքշիսի) ու կը գործածուէր լեմոնի տեղ, կերակուրներու մէջ:

Որթատունկի աւելը իր տեղը ունէր ժողովրդական բժշկութեան մէջ:

Թորանոցէն անցած շիւր կը գործածուէր որպէս դեղ ու պարարտացուցիչ:

Գալով խաղողին ու անկէ ստացուած արդիւնքներուն, թերեւս աւելորդ պիտի ըլլար գրել այդ մասին, բայց տոհմիկ բառերը գէթ յիշելու համար տանք համառօտ պատկեր մը:

Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ Ք = Է Գ Ի Կ Տ Ր Ե Լ

Պատեհուլիւն տալու համար տասանորդի հարկահաւաքներուն, որոնք կը նշանակէին տուն զրկուած խաղողի բեռներու քանակը, կառավարութիւնը կ'որոշէր իւրաքանչիւր շրջանի այգիներու բերքահաւաքի օրը: Խաղողի տուրքը կը կոչուէր Հէզիք: